



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

16 սեպտեմբերի 2011թ. թիվ 445

Ս.ԼԱՄՔԱՐՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՓՈԽԱՐԻՆՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Սամվել Լամբարյանի 2011 թվականի սեպտեմբերի 18-ից 25-ը UNICEF-ի տեխնիկական աջակցությամբ իրականացվող տարածքային սոցիալական զարգացման ծրագրերի շրջանակներում Իտալիայի Էմիլիա-Ռոմագնա մարզում կազմակերպվող մեկշաբաթյա աշխատանքային այցին մասնակցելու կապացությամբ.

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ.

Ս.Լամբարյանի բացակայության ընթացքում փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Լուսինե Վարդանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 16  
ք.Վանաձոր